«Քայլ առ քայլ»
բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության
մանկավարժական աշխատողների
մասնագիտական կարողությունների և
Հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահենք կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Սիլվա Հովհաննիսյան

Մանկապարտեզ՝ «52» ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2
ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ 4
ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 4
1.1 Ինտեգրված պարապմունք 5
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ 10
ԳԼՈՒԽ 2. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ 10
Եզրակացություն 15
Գրականության ցանկ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Այդ իսկ պատճառով ստեղծվել են ինտեգրված պարապմունքներ, որոնք ժամանակակից ուսուցման մեթոդների նորույթներից մեկն են: Այս տիպի պարապմունքները կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված պարապմունքները միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ պարապմունքի օրինակներ: Այս թեմայի նպատակն է ընդգծել ինտեգրված ուսուցման նշանակությունը կրթության որակի բարձրացման գործընթացում, միջառարկայական կապերի հիման վրա առարկայի կամ երևույթի համակողմանի ուսումնասիրումը, շրջապատող միջավայրի գիտակցված ընկալումը՝ երեխաների ճանաչողական գործունեության ակտիվացման բազմազան միջոցների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Տարբեր է նաև ինտեգրված պարապմունքի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք պարապմունքի ժամ՝ միավորված մեկ պարապմունքի մեջ: Ցանկացած ինտեգրված պարապմունք նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի պարապմունքի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Պարապմունքները մանկապարտեզում օգտագործում են տարբեր տեսակի գործողություններ՝ արհեստ, արվեստ, մաթեմատիկա, երաժշտություն, դիզայն, ձեռքի աշխատանք տարբեր համակցություններով: Նման պարապմունքներին սովորաբար

նախորդում են թեմատիկ պարապմունքներ, քանի որ աշխատանքը հիմնականում հիմնված է երեխաներին ծանոթ նյութերի վրա: Ինտեգրված պարապմունքներում մեկ խնդիրը լուծվում է տարբեր տեսակի գործողությունների ինտեգրմամբ:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս 70-ական թթ.-ին հարց է առաջացել երեխաների ճանաչողական գործունեության ակտիվացման, ըստ առարկայի արհեստական մասնատման հակասության հաղթահարման մասին: Սա հանգեցրեց միջառարկայական կապերի ակտիվ որոնմանը, դրանց օգտագործումը տարբերակված ուսուցման մեջ: Այս պահին հարց է առաջանում նախադպրոցական տարիքի երեխաների կրթության ինտեգրատիվ մոտեցում կիրառելու, ինտեգրված պարապմունքների կազմակերպման մասին: Այս անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք պատճառներով.

1. Երեխաներին շրջապատող աշխարհը նրանց կողմից հայտնի է իր բազմազանությամբ և միասնությամբ, և հաճախ նախադպրոցական կրթական ծրագրի բաժինները, որոնք ուղղված են այս միասնության առանձին երևույթների ուսումնասիրմանը, պատկերացում չեն տալիս ամբողջ երևույթի մասին՝ այն բաժանելով առանձին հատվածների: Ինտեգրված պարապմունքները զարգացնում են հենց իրենց սաների ներուժը, խրախուսում են շրջապատող իրականության ակտիվ իմացությունը, պատճառահետևանքային հարաբերությունների ըմբռնումն ու հայտնաբերումը, տրամաբանության, մտածողության և հաղորդակցման հմտությունները:
2. Ինտեգրված պարապմունքների անցկացման ձևը ոչ ստանդարտ է, հետաքրքիր: Պարապմունքի ընթացքում տարբեր տեսակի աշխատանքների կիրառումը բարձր մակարդակի վրա է պահում սաների ուշադրությունը, ինչը թույլ է տալիս խոսել պարապմունքի բավարար արդյունավետության մասին: Ինտեգրված պարապմունքները բացահայտում են զգալի մանկավարժական հնարավորություններ, թեթևացնում են հոգնածությունը, սաների գերլարվածությունը, էապես մեծացնում են ճանաչողական հետաքրքրությունը,

ծառայում են երևակայության, ուշադրության, մտածողության, խոսքի և հիշողության զարգացմանը:

3. Ինտեգրումը ժամանակակից հասարակության մեջ բացատրում է կրթության մեջ ինտեգրման անհրաժեշտությունը: Ժամանակակից հասարակությունը կարիք ունի բարձր որակավորում ունեցող, լավ պատրաստված մասնագետների: Այս կարիքը բավարարելու համար կրթված մասնագետների վերապատրաստումը պետք է սկսվի մանկապարտեզից, տարրական դասարաններից, ինչին նպաստում է նախադպրոցական ուսումնական հաստատություն, տարրական դպրոց ինտեգրվելը:
4. Ամրապնդելով միջառարկայական կապերը՝ ժամեր են ազատվում, որոնք կարող են օգտագործվել սաների զարգացման գործունեության, ինչպես նաև լրացուցիչ գործնական պարապմունքների համար:
5. Ինտեգրումը հնարավորություն է ընձեռում դաստիարակին ինքնաիրացնել, ինքնադրսևորվել և ստեղծագործել:

1.1 Ինտեգրված պարապմունք

Ինտեգրված պարապմունքը պարապմունքի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերա-կանգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց (երաժշտության, գրականության, նկարչության ստեղծագործությունների միջոցով այնպիսի հասկացության դիտարկում, ինչպիսին է «տրամադրությունը»):

Արդի ժամանակաշրջանի ուսուցման առանձնահատկություններից է գիտելիքների ինտեգրման միտումը: Ուսուցումը անձնավորության գիտակցությունը ձևավորելու և զարգացնելու հատուկ կազմակերպված գործընթաց է: Այն իրականանում է ուսուցման տարաբնույթ մեթոդներով, որը որոշակիորեն կարգավորված գործունեություն է՝ մանկավարժի և սովորողի ուսուցման նպատակներին ուղղված: Այժմ խիստ կարևորվում է, ոչ միայն սաների, այլև ուսուցիչների մասնագիտական ու որակական կարողությունները: Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի գիտությունների ուսումնառության ընդհանուր տիրույթների ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը: Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերացումներ ուսուցանվող նյութի մասին, արթնացնում են հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը. ոչ բոլոր պարապմունքները կարելի է անցկացնել ինտեգրված մեթոդներով: Կարևոր է նաև ինտեգրված պարապմունքն անցկացնող դաստիարակների պատրաստվածությունը և հոգեբանական համատեղելիությունը: Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ՝ իրականությունը, միջառարկայական

կապերով: Ուստի պարապմունքների պրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած սաների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումից, վերջացրած՝ սաների մոտ ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց: Այսօրվա մանկապարտեզներում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչն առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) պարապմունքի հետևյալ տեսակները.

● միջառարկայական - (երկու առարկաների միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա)

● բազմառարկայական - (երկուսից ավել առարկաների միջև՝օր. մաթեմատիկա-ապլիկացիա-երաժշտություն)

Անհրաժեշտ է միևնույն թեմայի բովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք և հստակեցնել առաջադրանքը պարապմունքի յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդհանրական հասկացությունները ներկայացնել հաջորդականությամբ, կիրառելով երեխաների ճանաչողական գործունեության ակտիվացման տարբեր միջոցներ: Ինտեգրված պարապմունքն ուղղված է թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ,

աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ: Մասնագիտական ուսումնասիրություններում մանրամասն վերլուծվել է ինտեգրված պարապմունքը՝ թե բովանդակային, թե կառուցվածքային կողմերով: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից: Ինտելեկտուալ քարտը որոշակի թեմայի բովանդակային ուսումնասիրման կառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղ արտացոլվում են հանգուցային հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ: Մշակված քարտը հիմք է հանդիսանում տարբեր թեմաներով պարապմունքների հետագա մոդելավորման և անցկացման համար: Ինտեգրված պարապմունքին առաջարկվող թեմաներն են՝ «Երկրաչափական պատկերներ», «Նկարչություն և ապլիկացիա», «Մաթեմատիկա և երաժշտություն», «Խոսքի զարգացում և նկարչություն», «Ջուր», «Տարվա եղանակներ», «Կենդանական աշխարհ», «Տոնածառ», «Ամանոր», «Մարտի 8» և այլն:

Ինտեգրված պարապմունքներն անպայման թեմատիկ են, որոնցում ընտրված թեման կամ հիմնական հայեցակարգը հիմք է հանդիսանում տարբեր տեսակի գործունեության առաջադրանքների համադրման համար: Ինտեգրված պարապմունքի առանձնահատկությունն այն է, որ տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները համակցվում են կոնկրետ թեմայի վերաբերյալ գիտելիքների ամբողջական համակարգ ստեղծելու համար: Ինչպես նաև, ինտեգրված պարապմունքի հիմնական նպատակն է պայմաններ ստեղծել երեխաների կողմից որոշակի առարկայի, հայեցակարգի, երևույթի համապարփակ դիտարկման, համակարգային և տրամաբանական մտածողության ձևավորման, երևակայության

արթնացման, ինչպես նաև գիտելիքի նկատմամբ հուզական դրական վերաբերմունքի համար:

Ինտեգրված պարապմունքը՝ որպես նախադպրոցականի իմացական կարողությունների ձևավորման լավագույն պայման, նպաստում է նրա ինքնուրույնության, նախաձեռնողականության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է պայմաններ ստեղծել երեխաների ընդունակությունների, հետաքրքրությունների զարգացման համար: Յուրաքանչյուր պարապմունք իր բնույթով պետք է լինի յուրօրինակ և հետաքրքիր, երեխայի վրա թողնի տարաբնույթ տպավորություն: Պարապմունքի ընթացքում երեխան հանդես է գալիս որպես ակտիվ ընկալող, իսկ դաստիարակը ուշադիր է յուրաքանչյուրին, ընդունում է կարծիքների բազմազանությունը և խրախուսում: Պարապմունքի ընթացքում կարելի է կիրառել հանելուկներ, գլուխկոտրուկներ, սուտասելուկներ, որը հնարավորություն է տալիս երեխաներին համագործակցելու և մտերմիկ հարաբերություններ հաստատելու:

Ինտեգրված պարապմունքն առավել իրագործելի է և նպատակային թեմատիկ ուսուցման ընթացքում: Թեմատիկ ուսուցումը ենթադրում է ուսումնական ծրագրերի տարբեր բաժինների միավորում, մեկ հետաքրքիր գաղափար ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են տարբեր առարկաներից բովանդակային միավորներ: Թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմված, որ երեխաները տեսնում և հասկանում են առարկայական ոլորտների միջև եղած կապերն ու դրանց կապը կյանքի հետ: Այս փաստը երեխաների համար անմիջապես նշանակալի է դառնում, երբ լուծելու համար նրանց է ներկայացվում մի խնդիր կամ նոր գաղափար, որը հնարավոր է լուծել միայն համատեղ գործունեության միջոցով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

3-6 տարեկան երեխաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում: Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին: Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված: Անհարժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում: Ուսումնական հաստատությունում ուումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկին, սակայն երեխաների հարմարունակության ապահովման նպատակով ուսումնական պարապմունքները կազմակերպվում են սեպտեմբերի 3-րդ շաբաթից և ավարտվում մայիսի վերջին: Պարապմունքներն անցկացվում են շաբաթական տեղաբաշխման գրաֆիկի և ռեժիմի (կանոնակարգի) համաձայն: Օրվա

կանոնակարգը փոփխվում է տարվա ցուրտ ու տաք եղանակներին համապատասխան: Նկատի առնելով օրվա ռեժիմի վերը նշված տարբերակները՝ յուրաքանչյուր հաստատություն կազմում է իր պայմաններին և յուրահատկություններին համապատասխան ռեժիմ՝ բնականաբար կատարելով կանոնակարգային առանձին պահերի փոփոխություն: Պարապմունքների միջև պետք է ապահովել 10-12 կամ 10-15 րոպեանոց ընդմիջումներ/

դադարներ, որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար: Երեխաների հետ աշխատանքն իրականացվում է խաղային գործունեության միջոցով: Պարապմունքները տարվում են երկու ձևով.

ա) համընդհանուր (ֆրոնտալ) ուսուցման ձևով, որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ,

բ) մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ՝ մայրենի լեզու-կերպարվեստ, մաթեմատիկա-երաժշտություն, մաթեմատիկա-կառուցողական աշխատանք, մաթեմատիկա-ապլիկացիա, խոսքի զարգացում-ապլիկացիա և այլն: Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել՝ կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային

կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով աշխատանք: Պարապմունքները

երեխաների համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները: Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում, պրպտում, լուծումներ գտնում, որոշումներ կայացնում: Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով: Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբով, ենթախմբերով, անհատական՝ կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմայի նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատուկություններից, ծնողների պահանջներից: Խառը նախադպրոցական խմբերում ցանկալի է ամբողջ խմբի երեխաների հետ պարապմունքներն անցկացնել ծրագրի մեկ բաժնի մասով: Կախված պարապմունքի բնույթից՝ դրանց բովանդակության մեջ թույլատրելի միացումն ինքնին պիտի բխի երեխաների տարիքային տարբերություններից: Լավագույն տարբերակը ենթախմբերով աշխատանքն է: Դաստիարակը պարապմունքը սկսում է ամբողջ խմբի հետ: Խթանման փուլից հետո խումբը բաժանում է տարիքային ենթախմբերի և միևնույն թեմայի շրջանակներում յուրաքանչյուր խմբին հանձնարարում է իրենց տարիքային առանձնահատկություններին համապատասխան առաջադրանք: Փոքրիկները պարապմունքն ավարտում են մի փոքր շուտ: 3-4 տարեկան երեխաների պարապմունքը կարող է տևել 15-20 րոպե, 4-5 տարեկան երեխաներինը՝ 20-25 րոպե

և 5-6 տարեկաններինը՝ 25-30 րոպե: Պարապմունքների ընթացքում անցկացվում է

թարմացնող վարժություն կամ աշխուժացնող խաղ՝ 2-3 րոպե տևողությամբ: Պարապմունքների միջև կազմակերպվում է ընդմիջում՝ 10-12 /կամ մինչև 15/20 րոպե տևողությամբ: Պարապմունքների ընթացքում երեխաների ակտիվ շարժունակության և բարձր աշխատունակության ապահովման համար կարևոր է, որ դաստիարակը նախապես ճիշտ պլանավորի գործունեության առանձին տեսակների և հանգստի հերթագայումը:

«Ավանի մսու-մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ի հ.52 մ/մանկապարտեզ

Դաստիարակ՝ Սիլվա Հովհաննիսյան

Մեթոդիստ՝ Արևիկ Նադարյան

Ավագ՝ խումբ

Երեխաների թիվը-32

Պարապմունքի անվանումը՝ Մաթեմատիկա

Պարապմունքի թեման՝ «Երկրաչափական պատկերներ»

Պարապմունքի նպատակները համապատասխանում են ծրագրային պահանջների, իրատեսական են, հստակ ձևակերպված: Առկա են անհրաժեշտ ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերը, դիտակտիկ պարագաները, ստեղծված է համապատասխան միջավայր: Դաստիարակի խոսքը գրագտ է, հասկանալի, կարողանում է հմտորեն կառավարել խումբը: Պարապմունքը ինտեգրված էր՝ մաթեմատիկա - խոսքի զարգացում – երաժշտություն, և կառուցողական մեթոդիկաներ, որը անցկացվեց խաղային ձևով: Երեխաները ակտիվ են, ուշադիր, ստացել են համապատասխան գիտելիքներ, կարողանում են հմտորեն նկարագրել և տալ հստակ սահմանում երկրաչափական պարկերների մասին: Պարապմունքի ընթացքում դաստիարակը օգտագործեց արդյունավետ մեթոդներ, հնարներ՝ պասիվ երեխաներին ներգրավվելու, ակտիվացնելու և որոշ խնդիրներ հաղթահարելու համար:

Նոր նյութի ուսուցումը իրականացվեց գործնական աշխատանքի միջոցով. երեխաները մետաղալարի օգնությամբ ստացան շրջան, ապա շրջանի երկու կողմերը սեղմելով ստացան ձվածիր(օվալ) պատկերներ: Դաստիարակը պարապմունքի ժամը օգտագործեց արդյունավետ, ապահովելով փուլերի տրամաբանական կապը: Պասիվ և ամաչկոտ երեխաները գեղեցիկ, մեծ երկրաչափական պատկերներով վերանորոգեցին ստվարաթղթից պատրաստված ավտոբուսը, որի միջոցով ավելի

ամրապնդվեց երեխաների գիտելիքները երկրաչափական պատկերների և ապլիկացիայի վերաբերյալ: Պահպանվեց պարապմունքի սահմանված տևողությունը: Դաստիարակը հասավ իր նպատակին:

Եզրակացություն

Սույն թեմայի նպատակն է ներկայացնել ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից մեկը, որն իրականացվում է ինտեգրված ուսուցման օգնությամբ: Շատ կարևոր է ճիշտ որոշել, թե որ թեմաներից կարելի է կազմակերպել ինտեգրված պարապմունք, որտեղ կարող ենք պահպանել միջառարկայական կապեր, և որն է մեր պարապմունքի *գլխավոր նպատակը*: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված պարապմունքների համար գրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Ինտեգրված պարապմունքը դառնում է գրավիչ դերախաղ, քննարկում, ոչ թե զուտ գիտելիքների ծավալի հաղորդում: Ինտեգրված ուսոցման նպատակնն այն է, որ ուսումնական գործընթացում երեխան ոչ թե պետք է նստի, լռի, լսի, երբեմն էլ խոսի, այլ առավելապես պետք է գործի, մասնակցի, աշխատի և պատասխանատվություն ստանձնի: Մենք խնդիր ունենք ուսուցումը դարձնելու աշխատանքային գործընթաց, հակառակ դեպքում փոքր տարիքից երեխաների մեջ սերմանում ենք ծուլություն և

անպատասխանատվություն: Մյուս սկզբունքն այն է, որ նոր ուսումնական միջավայրը պետք է լինի բազմանպատակ, շարժուն, բաց: Երեխաները պետք է հնարավորություն ունենան անհատական, զույգերով, փոքր ու մեծ խմբերով աշխատելու, ինչը հնարավորություն կտա ուսումնական գործընթացը դարձնել բազմազան և ոչ ձանձրալի: Նոր ուսումնական միջավայրում սաները պետք է հնարավորություն ունենան աշխատել ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Բացի այդ, երբեմն երեխաները միմյանցից ավելի լավ են սովորում, քան ուսուցիչներից: Վերջին տարիներին խրարուսվում են նմանօրինակ պարապմունքի վարման եղանակները, բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր պարապմունքին կարելի է կիրառել նոր, ինտերակտիվ մեթոդներ ու պարապմունքն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ պատկերացնել տվյալ պարապմունքին համապատասղանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու սաների կարողությունները, քանի որ յուրաքանչյուր պարապմունքի համար անհրաժեշտ է կիրառել սոցիալական հմտությունների ու արժեքային համակարգի ընտրության յուրովի մոտեցում: Այս և նմանօրինակ խնդիրներից զերծ մնալու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ուսուցիչ հստակ տիրապետի առարկայական չափորոշչային պահանջներով ներկայացվող պահանջներին, իմանա սոցիալական հմտությունների և արժեքային համակարգի կշիռն ու դերը յուրաքանչյուր պարապմունքի պրոցեին անհատապես: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Այս նախապատրաստական գործունեության ընթացքում դաստիարակը որոշում է.

1. ինտեգրված պարապմունքի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակները

2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը

3. ինտեգրման ձևերն ու մեթոդները

4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը

5. նյութի հաջորդականության կառուցվածքը

6. նյութի ներկայացման միջոցները

7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների միջև

8. տվյալ պարապմունքին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները

9. տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողությունների ու հմտությունների զարգացում

10. սովորողների համար պայմանների ստեղծում՝ կիրառելու իրենց գործնական հմտությունները, ստեղծագործելու կարողությունները, ինքնադրսևորվելու՝ միաժամանակ ձեռք բերելով կայուն գիտելիքներ

11. սաների բանավոր խոսքի, ստեղծագործական մտքի, լսողական հմտությունների զարգացում

12. պարապմունքի պլանի կազմում, պարապմունքի տևողության որոշում

13. ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի պարապմունքի պրոցեսի ընթացք

14. ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, գնահատման համակարգի ներառում

Ինտեգրված պարապմունքը, դա գործունեություն է, որն ուղղված է որոշակի թեմայի ամբողջական էության բացահայտմանը տարբեր տեսակի գործունեության միջոցով, որոնք համակցված են գործունեության լայն տեղեկատվական դաշտում՝ փոխադարձ ներթափանցման և հարստացման միջոցով: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքը պահանջում է հատուկ հստակություն, մտածված և տրամաբանական փոխկապակցվածություն տարբեր առարկաներից նյութերի թեմայի ուսումնասիրության բոլոր փուլերում: Դա ձեռք է բերվում ծրագրային նյութի կոմպակտ, կենտրոնացված օգտագործման, խմբասենյակում երեխաներին կազմակերպելու ժամանակակից մեթոդների կիրառման և ինտերակտիվ աշխատանքի պայմաններում: Ինտեգրված պարապմունքի նախապատրաստման

փուլում, գիտելիքների համակարգային բնույթին համապատասխանելու համար, մանկավարժները օգտագործում են մտավոր քարտեզների մեթոդը կամ մտավոր գործողությունների քարտեզները:

Պարզ և հստակ ձևակերպելով պարապմունքի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ պարապմունքում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ:

Հիմնական նյութը դառնում է պարապմունքի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Այսպիսով, ելնելով ինտեգրված պարապմունքի տեսակից և ինտեգրվող առարկաների պարապմունքի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց պարապմունքի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից,թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է պարապմունքի պլանը, որոշվում է պարապմունքի տևողությունը: Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը,պարզորոշ կերպով ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված պարապմունքն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը պարապմունքի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

Հետազոտական աշխատանքի ընթացքում աշխատելով ավագ խմբում, վարելով այն երաժշտական դաստիարակի հետ, օգտագործվել է համադրման մեթոդը.

Մաթեմատիկա - խոսքի զարգացում, ապլիկացիա – երաժշտություն: Որի ընթացքում երեխաները ցուցաբերեցին ակտիվ մասնակցություն, ձեռք բերեցին թվաբանական վերլուծություն իրականացնելու հմտություն, կատարել կարգային հաշիվ և ապլիկացիայի միջցով տիրապետել երկրաչափական պատկերների իմացությանը: Այսպիսով, ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին. «կրթությունը պետք է լինի փոքր ծավալով, բայց տարողունակ»: Հետևաբար, ինտեգրված պարապմունքը նպաստում է երեխաների գործունեության տարբեր տեսակների առկայությանը՝ համատեղելով տարբեր ոլորտների գիտելիքները:

Գրականության ցանկ

1. Ինտեգրված կրթություն Վիքիպեդիա
2. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Սիրամարգ Վարդումյան, Իզաբելա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003թ., 256 էջ:
3. «Ինտեգրումը կրթական գործընթացում » - Փնջոյան Տ.-2018թ.